



Աթոռանիստ Մայր եկեղեցւոյ համալիրէն ներս երէկուան կրօնական եւ աշխարհիկ արարողութիւնները առիթ հանդիսացան մեծ խանդավառութեան

ԿԵՂՐՈՆԱԿԱՆԻ ՄԻՐՈՅ ՄԵՂԱՆԸ

Աշակերտները օրուան յայտագրին ընթացքին հանդէս եկան «Յիշենք անցեալը, կերտենք ապագան» կարգախօսով՝ շեշտելով հայ դպրոցին առաքելութիւնը



Հայկ Ասլանեան եւ Յարութիւն Էպէտօլու



Անահիտ Պոզանեան եւ Այտա Գարա



Տիանա Գամբարոսեան եւ Տանիէլ Անթիֆանեան



Սրբազան Հայրը եւ իր սեղանակիցները փակման աղօթքի պահուն (Լուսանկարներ՝ Արի Թաշ)



Միհրան Ուրիկեան եւ Պարոն Նալպանտ



Յովհաննէս Ճիրօլու եւ Թանէր Մաքսիմօզեօր



Շիրին ամուր



Արման Մարաշեան եւ Հայազատ Կազերօլու



Խաչիկ Քէչեղու եւ Սարգիս Չեթինեայա



Պերմ Բէտստօլու եւ Նուրիան Տավուցեան



Վրէժ Շէշէբեան, Սեւան Շէշէբեան եւ Անդրանիկ Աւիթօլու



Խաչիկ Կեօֆէտօլու, Արսէն Էրօլ եւ Խաֆէմուր Տահինկէօզ



Մոնիֆ Երկանեան



Հրանդ Մոսկոֆեան



Սիլվա Գոյումեան



Ճանէլ ամուր

Երէկ, Գոմբարուի Ա. Աստուածածին Աթոռանիստ մայր եկեղեցւոյ համալիրէն ներս հերթական անգամ ժամադրուած էին համայնքային շրջանակները՝ Կեղ-րոնական վարժարանի ի նպաստ տարեկան սիրոյ սեղանին առթիւ: Մեծ խանդավառութիւն ստեղծեցին կրօնական եւ աշխարհիկ արարողութիւնները, որոնց նախագահեց Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Տ. Արամ Արք. Աթէշեան:

Առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ Մայր եկեղեցւոյ մէջ արդէն զգալի էր եռուզեռ մը: Ս. Պատարագը մատոյց Տ. Զատիկ Արք. Պապիկեան: Ներկայ էին Տ. Անդրէաս Ա. Քհնյ. Յակոբեան եւ Քոյր Գայիանէ Տուբաթերեան: Ս. Սեղանին սպասարկեցին Ռոպէր Սրկ. Քիւշիւքաբաբուրժ եւ այլ գլխիւներ: Երգեցողութիւնները կատարուեցան Կեղրոնական երգչախումբին կողմէ՝ ղեկավարութեամբ Ովաննա Քաչէնտէրեանի եւ երգահանահարութեամբ Քրիստին Սալմալլի: Հանդիսադիր Սրբազան Հայրը տուաւ օրուան պատգամը: Ս. Պատարագէն վերջ կատարուեցաւ մատաղօրհնութիւն: Աւելի վերջ, ըստ ընկալեալ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Կեղրոնական վարժարանի հիմնադիր երանաշնորհ Տ. Ներսէս Պատրիարք Վարժապետեանի շիրմին մօտ, որ կը գտնուի Մայր եկեղեցւոյ դաւթիւն մէջ:

Կրօնական արարողութիւններէն վերջ յարակից Պէդ-ճեան արահին մէջ սարքուեցաւ սիրոյ սեղան: Աշխարհիկ հաւաքոյթին եւս նախագահեց Ընդհանուր Փոխանորդը, որու կողքին էին Տ. Զաքէոս Ծ. Վրդ. Օճանեան եւ Հոգեւոր Հայրերը: Սեղանակիցներու շարքին էին Սեւ ծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան մօտ Հայաստանի մշտական ներկայացուցիչ Արսէն Աւագեան, Վաքըրներու խորհուրդի մօտ փոքրամասնութեանց ներկայացուցիչ Թորոս Ալճան, բազմաթիւ ծանօթ ազգայիններ, բարե-

րարներ, համայնքային մարմիններու ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, զանազան սերունդներէ կեղրոնականացիներ եւ հիւրեր: Մատաղօրհնութեան կարգադիր յանձնախումբի առնապետ Հայկ Ասլանեան եւ իր ընկերները, Ղալաթիոյ ինքնակալութեան առնապետ Յարութիւն Էպէտօլու եւ ընկերները ջերմ մթնոլորտի մը մէջ հիւրընկալեցին բոլոր ներկաները:

Օրուան յայտագրին շրջագծով ելոյթներով հանդէս եկան Յարութիւն Էպէտօլու եւ Կեղրոնական վարժարանի տնօրէնուհի Սիլվա Գոյումեան: Ինքնակալութեան առնապետ Յարութիւն Էպէտօլու այս առթիւ բացատրութիւններ տուաւ Տղափաշէի իրենց տարածքի արժեւորման ծրագրին շուրջ: Ըստ իր բացատրութիւններուն, այդ տարածքին վրայ պիտի կատարուի շինարարութիւն մը, որ պիտի տեսէ շուրջ երկու տարի: Այդ գործընթացի աւարտին տարածքին վրայ պիտի կառուցուի շէք մը, որ պիտի արժեւորուի որպէս պանդոխ: 25 տարուան ժամանակաշրջանի մը աւարտին շէքին սեփականութեան իրաւունքը պիտի պատկանի Ղալաթիոյ ինքնակալութեան, իսկ ընթացքին պիտի առնուին վարձավճարներ:

Սիրոյ սեղանի տեսողութեան յայտագրին խանդավառ մասնակցութիւն բերին նաեւ Կեղրոնականի աշակերտները: Տայք Միխիստօլուի հանդիսավարութեամբ անոնք արտասանութիւններ ու երգեր ներկայացուցին հանդիսատեսներուն: Աշակերտները նաեւ սրահին մէջ տողանցեցին պաստառներով, որոնք յիստուն տարի առաջուան իսթանպուլահայ կրթական կեանքին վերաբերեալ վիճակագրական տուեալներ կը ցոլացնէին եւ այդ տուեալներուն լոյսին տակ ընկալնաբար բոլորը մտածելու կը հրաւիրուէին այսօրուան անհամեմատելի իրականութեան շուրջ: Տղաքը այս

Յարութիւն Շանլը, Նուրիան Տեօնէր եւ Օճնիկ Նալպանտազարօլու

Դանիէլ Խաչիկօլու, Վարդան Էրօլ եւ Նուպար Մանավեան



Թելեմակ Լոմմակէօբեան, Վարուժան Օրանըր եւ Վարուժան Արսլանեան



Մարտիրոս Ենիեղլեան, Արման Զաֆրօլու եւ Ստեփան Աճէմօլու



Արեգ Մումեու, Թորգոմ Ճանէլ եւ Ստեփան Իննէեան



Ատիս Տէյրմէնիօլու, Ալեքսան Եղուաշ եւ Արա Զընար

